

ՔԱՏԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուլկարիոյ համար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻՅ ՎՃՆԻՐԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք հս չեն տուիր
 —)(—
 Իրանուցման տոյր 20 սան-
 քիս հ. երկին աւելի սե-
 զմաներու համար 20 Օլո
 զեղ իրարայ :

ՇԱՐՇՈՒՄ

Համա՝ եւ որով որկեց
 ի ին հասցիին
 R. P. Kalémkarim Meharistangasse W. 2
 (Autriche) Vienne
 «Шаржум»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀԻՄԱՍԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆՈՒԹԻ ԵՆ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ.

ՇԱԳԻՐ ԵՒ ՀԱՖԸԶ

—)(—

Քանի անգամ որ Եւրոպան բարենորոգումներու լուրջ միտումներ կը ցուցնէ, կը տեսնես որ թուրք կառավարութիւնը իր երկու համբաւաւոր քննիչներուն անունը և անոնց տուած տեղեկագրերը հրապարակ կը նետէ, շանաւրով, բարենորոգումներու բնմին վրայ գտնուող այդ երկու ճարպիկ գերասաններուն ետին սքողել, իր նենգամտութիւնը, և, առանց ազգեցիկ ստիպումներու բան մը չընելու հաստատ մտադրութիւնը:

Շագիր փաշան, որ Հայաստանի մէջ միշտ արիւն ու աւեր ձգած է իր քայլերուն ետեւէն, իր պաշտօնը գրեթէ աւարտած է, Իրան մատուցանելով տեղեկագիր մը, որ իր կողմնակալ և լաւատես բնութեան հակառակ, դարձեալ բաւականէն աւելի է Հայաստանի անտանելի կացութիւնը բնութեւն տալու, բանտերու դժուր խայր տեսքը պատկերացնելու, ամբողջ Վարչութեան աւազակային մեքենայ մը ըլլալը հաստատելու, բոլոր երկիրը սանձարձակ կողոպուտի և մահացու հալածանքի վայր մը ներկայացնելու, մէկ բառով՝ այնպիսի ընդհանուր կացութիւն մը ցուցնելու, որ անհնարին կը դարձնէ երկրին և արտասահմանի հայերը հանդարտեցնելու խնդիրը, ու ընդհակառակն օրէ օր աւելի կը շնչտէ վճռական քայլեր առնելու պէտքը, թէև այդ քայլը անլուր արհաւիրքներու նոր դարագլուխ մը բանայ աշխարհի առջեւ:

Մ'չ նուազ շահեկան անձ մը նաեւ Բոսովայի քննիչ Հաֆիզը, որ օր չանցնէր առանց իր կառավարութեան զրկելու ընդարձակ տեղեկագիր մը. և այդ գրութեանը նախորդներու վրայ բարդուելով, թուրք դիւանատունները խնդելէ տարբեր օգտակարութիւն մը չունի:

Այս երկու քննիչները, ինչպէս նաեւ բոլոր անոնք որ տալիս տասներկու ամիս կը զրկուին

տէրութեան չ'ար կողմերը, նոյն իսկ եթէ աշխարհիս ամենէն բարեացակամ ու խղճամիտ անձերը ըլլան, անխղճութեան մատնուած են: Ատոնք, արմատական և բուժիչ վիրահատութիւն մը չեն կրնար ընել, սահմանուած ըլլալով իրենց ափով միայն գոցելու լայն վերքեր, որոնցմէ վազու արիւնը բնականաբար չը դադարի: Անկեղծութիւնը բոլորովին կը պակսի: Եւ ճիշդ այդ հիւանդութիւնն է որմէ թուրքիս կր մեռնի: Իր ախտը սրտին մէջն է. անկանոն բարախումները չեն կրնար ամբողջ մարմինը վերականգնացնել: Որքան ալ թուրք պաշտօնէութիւնը քննադատուի իր կաշառակեր, թույլ, ապկար հանգամանքին համար, իրապէս այն չէ՛ յանցաւորը. ամբողջ կայսրութեան բուն թշնամին, ա՛յն է որ տապար մը ձեռքը առած հիւմիւրէն կը կործանէ զայն, արիւնն աւերած բեկորներ կը ստեղծէ, որոնցմէ սակայն հրաշքով Պուլկարիաներ, Կրէնէներ ծնած են, ու տակաւին Հայաստաններ, Մակեթոններ յառաջ պիտի դան: Եւ անհնար է որ իրերը տարբեր կերպով յառաջանան, երբ Հայաստանի, ու ամբողջ թուրքիս մէջ պարզուած քրտմեղի ողբերգութեան մէջ, Վոսփորի էֆէնտիները կը շարունակեն ամենէն անպատկառ կատակերգութիւնը ներկայացընել: Տեղեկագիր, ինչ տեղեկագիր: Թափուած արիւնը, անպատմելի հարստահարութիւնը ու մարտիրոսական տառապանքը զոր հոյ ազգը կրեց տիեզերքի առջեւ, ա՛լ տեղեկագրի պէ՞տքը կը թողուն. այդ տեղեկագրէն ամէն տեղ չեն տեսնուիր լիարուստ սխառած՝ Հայաստանի ամենէն փոքրիկ գիւղին փլատակներէն սկսեալ, մինչեւ Պուլսոյ սալայատակներուն վրայ: Եւ երբ սզգ մը, այսքան դառն արկածներէ ետքը, դեռ կենդանի կը մնայ, և իր բոլոր նախկին ուժովը արդարութիւն կը գոչէ, ո՞ր ախտը տարրը, ո՞ր բռնակալը անպատիժ կը մնայ ու չը շանթահար-

ու ի այս որոտումին կայծակէն: Փաշայական տեղեկագրերը և անոնց տրուած պատասխանները, այլեւայլ պաշտօնեական յըղուած ցուցակները, կուսակալներու քաշուած հեռագրերը, վրան բաց սուտեր են որոնք չեն կրնար գոհացնել ո՛չ հայ ազգը և ո՛չ Եւրոպան:

Բացարձակ արդարութիւն. բացարձակ ապատու թիւն և մարդկային նուիրական իրատունքներու յարգանք. ա՛յս է ինչ որ ստիպողաբար կը պահանջուի թուրքէն: Ստիպողաբար՝ որովհետեւ վարանում մը, այս պահանջին ետևի կողմը պիտի ցոյց տայ իրեն, բան մը որ այլապէս ամենէն արամորանկանը և բնա անն է. այսինքն՝ մահկանայն վերջնական շնչումը այն քրիստոնեայ երկիրներէն, որոնց վրայ սեղիպուածով մը ծագած է, աշխարհի կուրութեան օրերուն:

ԳՍՐԵՐ-ԱՐՇՈՒԹԻՐ

ՕՐԸ ՕՐԻՆ

ԼՈՒՉԻՆԻԻ ԴԱՏԸ

Շարժումի ընթացողներին անձանօթ չէ այս անունը. սրանով զբաղվեց ամբողջ աշխարհի մամուլը: Եթէ Լուչինին սպանէր մի հասարակ մարդու, ոչ ոք չէր հետաքրքրուի ոչ զոհովը և ոչ սպանողովը: Ա. խարհի ամէն անկիւնում ամէն վայրկեան սպանողներ կան, ուրեմն և սպանողներ, բայց զբանք անյայտ են մնում մեծ մասամբ:

Լուչինին անյայտ չ'ը կարող մնալ, երա զոհը նշանաւոր կայսրուհի էր, և յանցանքը ոչ անձնական շանթի համար...:

Առաջին վայրկեաններում ամբողջ աշխարհը սարսռեց այդ յանդուգն ոճրագործութիւնից, որովհետեւ զոհը ու զոհեց—ամենախիստ պատվաւոր լուչինի համար. ամենախիստ օրէնքներ անխիտանկատութիւնը արմատախիլ անելու համար: Մամուլի ներկայացուցիչները միայն մի քանիսը իրանց չը կորցրին, ջանացին այդպիսի ոճրագործութեան պատճառները ուրիշ խաւերում փնտռել և ժամանակակից բնկերական վատ կազմակերպութեան հետեւանք համարել:

Յանցաւորը բանտում նստած սպասում էր իր զէմ գրողված աշխարհի դատաստանի որոշման. և սրանից մի քանի օր առաջ տեղի ունեցաւ այդ դատը. որի մասին բուլգար «Նարոդնիյ Պրաւալի» ժնէլի թղթակիցը մտաւերապէս հետեւեալն է գրում:

—Դատից մի քանի օր առաջ ժնէլում յուզիչ լուրեր տարածվեց. դատաստազը անստորագրի և սպանական նամակներ էր ստանում անխիտանկատներից. ամենքն էլ վախենում էին, որ կրկին մի անխիտանկատ գործ արիւնալից զէպ տեղի կունենայ: Վերջապէս հասաւ դատարը, դատարանի մուտքը հսկում էին հրացաններ լիք պահած զինուորներ, մի բան որ երբէք չէ եղել ժնէլում: Մուտքը հասարակութեան համար արգելված էր, կային միայն երկուական թղթակիցներ, զինուորական աւտորիական և իտալական, իրաւարանութեան ուսանողներ, փաստաբաններ և կառավարութեանը յայտնի նշանաւոր անհատներ:

Դատաստազը պատրաստում էր իր անողոք մեղադրականը, իսկ մենք անհամբեր պնտում էինք ոճրագործին: Վերջապէս Լուչինին ներս մտաւ. հանդիսականներս հիասթափվեցինք. ոճրագործ Լուչինին, որով աշխարհը զբաղվեց մի քանի ամիս և սարսափեց, չիկաներ, նուրբ դիմազոծերով, մեղմ արտայայտութեամբ մի երկտասարդ է. զզվեցնող ոչ մի բան չը կայ նրա զէմքում և ոչ խստութեան նշոյլ. ընդհակառակը տեղի համակրութիւն զարթեցնող և զուրեկան զէմք: Մի խօսքով ոչ մի նշան ի ծնէ ոճրագործի, ինչպէս սպացուցանում է իտալական եղեռնային դպրոցը: Հայեացքը միայն շարժուն է. զէմքում հոգեկան տանջանքի ոչ մի հետք չը կայ:

Կանչված են 30 ի չափ վկաներ. բոլորը միեւնոյն բաներն են կրկնում. ձանձրացանք. ամենքից շատ ձանձրացաւ Լուչինին և բացակայեց:

—Սպանողը ևս եմ, էլ այս կատակերգութեան կարիք չը կայ: Երբ դատաստազը ուզեց հաստատել թէ Լուչինին ուզեցել է փախչել, Լուչինին պատասխանեց բուական վերաւորված կերպով:

—«Փախչում էի միայն անձամբ իշխանութեանը անձնատուր լինելու նպատակով, չէի ուզում որ լրտեսները ինձ քարչ տան ոստիկանատուն»: Լուչինին բոլոր հարցերին պատասխանում էր հանդարտ կերպով, առանց ինքնազոլութեան և շինուան վախութեան: Մենք զարմացանք այն անդրդվելի պաղարիւնութեան վրա, որ նա ցոյց տուց այն միջոցը,

նոր Ազգայնական վարչութիւն, հաշուեքննիչ յանձնաժողով, Բանկային պաշտօնեաները փոխուեցան: Ընթերցարան, լսարան և գիշերային վարժարան բացուեցան: Գրասիրաց եղբայրութիւնը կենդանացաւ և այսօր իր մէջ ձուլելով հայկական ընթերցարանի ընկերութիւնը, յոյս կը ներշնչէ ապագայ փառաւոր գործունէութեան:

Օր մը, սակայն, հովը կը փչէ և վանեցի երիտասարդ մը, որ վանի յեղափոխութեան աստի, որիչ շատերու նման, կուտած էր թուրք զօրքերու և բուրա խուժանին գէմ, և յետոյ յաջողած էր ինքզինքը արտասահման նետել, կուգայ հոս և կը կարծէ թէ զբիշներու դործերը նսեմացնելով կրնայ իր գործերը բարձրացնել: Անօթիներու խումբը կը շրջապատէ զնա, և ահա կսկսի պոչաւոր և անպոչ սուտերու տարաք մը, հայհոյութիւններ, գոռում ու գոչումներ, զրպարտութիւններ: Փողոցները, սքանաւանները, եկեղեցիներ, վերջապէս ամէն տեղ խռովութեան ասպարէշ կը կրկնուի: Եղբի իսկ կը փորձեն լսարանը և ընթերցարանը սրբապղծել, բայց անօգուտ:

Խայտառակութիւնը իր գազաթնակէտին կը հասնի երբ Արսէն վարդապետ, անօթիներու խումբին միակ յոյսը, հոս կուգայ: Թաղական Խորհուրդը, իբրազեկ վարդապետին անցնալ խռովութեանց և շայտախնայ, կը դիմէ անոր և կը խնդրէ որ մի քանի օր հլուր մնալէ, պատարագ մը ընելէ և քարոզ մը խօսելէ յետոյ մեկնի: Յորչափ աղքին կալուածները գրաւի տակ են, Արսէն վարդապետի որիչ բան չէր կրնար ըսուիլ: Խնդր Սօփիա ութը օրերու մէջ քանդահանգ սակի, իսկ Փ. Պօլիս ինը սակի ծախսած էր, որպէս զի այդ վարդապետը իր խռովարարական շրջանը կատարէ: Թաղական Խորհուրդը կը խնդրէ նաև որ լրբընթերցարանը չը կորսնցնէ և շփոթութեանց պատճառ չը դառնայ:

Արսէն վարդապետ հակառակը հասկցած է: Երեկ իր քարոզին մէջ կը յարձակի աջ և ձախ, Լուսին բեմ մը դարձնելով կէկղեցոյ բեմը, կը նախատէ Պուլկարիա եկող բոլոր միւս վարդապետները, ասոնք իշտակաւ անտերով կը յայտարարէ թէ իր արիւնք թափելու պատրաստ է... Պուլկարայի մէջ, թէ հոսանքին գէմ պիտի մարանչի վերքեր ստանալով: Զարմանալի է որ վարդապետը «սիրեցեք զմիմանս» բառերը իրեն բնաբան ընտրած էր: Առանց խղճահարութեան կը յայտարարէ թէ ինք տակաւին այցելու հովիւ է Պուլկարիոյ, մինչդեռ շատեր գիտեն թէ իր պաշտօն շատոնց վերջացած է և վայրկեան մը

անգամ պաշտօնապէս Պուլկարիոյ մէջ չը կրնար մնալ:

Ասիկայ կատակերգութեան առաջին արարուածն էր եկեղեցիին մէջ, Երկրորդ արարուածը կը կատարուի դ. րոք բակին մէջ, վախճանած Տ. Արիստակէս քահանային գերեզմանին վրայ: Արսէն վարդապետ շրջապատուած անօթիներու խումբէն և ուրիշ տղետ խեղճ անհասներէ, հոգեհանդիստ կը կատարէ, կոկորդիլոսի արցունքներ թափելով, և զո՛հ մը ներկայացնելով զայն յեղափոխական հոսանքին, մինչդեռ ամէն ոք գիտէ թէ Արսէն վարդապետ ուխտալի թշնամին էր խեղճ քահանային: Մարդիկ իրեն քաշելու համար, դերք փոխել պէտք էր: Եւ ահա անօթիներու խումբին մէջ անգամը կապարուած ճառ մը կը կարգայ բարի գալուստ մաղթելու համար վարդապետին: «Մեր ստոած երակներուն մէջ արիւն վազուցիք» կը գոչէ: Եւ ամբողջ խումբը որ ը բազկանայ նախկին յեղափոխականներէ, հակաքաղաքականներէ, թրքամոլներէ և լրտեսներէ, կեցցէներով և ծափահարութիւններով կը թընդացնէ օգը: Իսկ զարգացած դասակարգին մի քանի անդամները հեռուն կանգնած կը ծիծաղէին այս միմտութեանց վրայ:

Խօսք մը միայն: Արսէն վարդապետ միշտ կը յեղեցի թէ իր գործերը և իր անձը քննադատելով քննադատած կը լլանք Հայրիկի գործերը և անձը: Պուլկարիոյ մէջ չը կայ Հայ մը որ չը յարգէ Հայրապետը: Անոր զրկած Հովիւը մեր դուխին վրայ տեղ ունի: Բայց մենք կը քննադատենք ինքնակոչ-Հովիւ, խռովարար և կուսակցութիւն կազմելու ջանացող Արսէն վարդապետը: Այդ իրատեսքը ոչ ոք կրնայ խել մեղնէ, ոչ իսկ Հայրից ընդ հանուր Հայրապետը: Կրօնի և անկրօնութեան փոտած զէնքը ալ չը կրնար ծառայել իսկ վարդապետի ձեռքը: Եթէ Հայրիկը նախատող մը կայ, այն է, ստանց արակոսի, իսկ վարդապետ Վեհուհին է իր քարոզչութիւն և խռովարարութիւններով:

ԱՆԳՆԱԿԱՆ ԲԱՐՈՉՈՒ ՄԵ ԿԱՐՏԻՔԸ

Գիտենք թէ Վիլհելմ կայսեր փերլին ճամբորդութիւնը և Սուլթանին ցոյց տուած եղբայրակցութիւնը, հակակաւ ջարդերու այնքան մտակ ժամանակամիջոցի մը մէջ, ցասումի և նողկանքի ընդհանուր ազդակ մը բարձրացնել տուաւ աշխարհի ամբողջ անաչառ մամուլին: Շատ բաներ ըսուեցան ու գրուեցան և սակայն աւելորդ չենք դատեր հետեւեալ տողերն ալ թարգմանաբար արձանագրել, որպէս զի Շարժումի

ամէն մէկ ընթերցող և յեղափոխութեան քաջ զաւակ՝ որոճայ և դատէ ինչպէս որ կուզէ:

Պատ. Աւօլթր Աւալը քարոզելով էտիմպուլի կիլիֆիլական Յիշատակաց եկեղեցիին մէջ, ըսաւ թէ Գերմանիոյ կայսեր Տաճկաստանի Սուլթանին ըրած այցելութիւնը, ինչպէս նաև անոր Ս. Երկրին մէջ խօսածները ու ըրածները պէտք է նկատել իբրև արտանշան մը այն ճիւղային և հակաքրիստոնէական վիճակին որուն մէջ այսօր Եւրոպան կը գտնուի: Այդ նուիրական վայրէջքները կը խաղաղութեան իշխանը իր փերովը յաւէտ սրբաբայուց—կը գոչէ զէնքի և զինուորանշու տէրը և կը ծանուցանէ աշխարհի առջև վայրագ բռնութեանց աստուածացումը, հոգ չէ թէ այդ վայրագ բռնութիւնները տաճկա ան աչգասպանութեան պատկանին, սպաննութիւն որ իր մէջ կը կրէ զազրելի կրթութիւն, ամօթալից բռնաւարտութիւն և սոսկալի արկնէլ զուխիւն: Սակայն կայսրը, ամէն նկատում ոտքի տալ առնելով, վատութեամբ և աներեսութեամբ տանիքներու բարձունքին իր դժոխաստիւն հետ ունեցած բարեկամութիւնը հրապարակելով հրապարակեց և այսպէս Եւրոպայի բացարձակապէս ցուցուց թէ՛ կրօնք, մարդկութիւն, բնական զգացումք իր քով յարդ ու արժէք չունին, երբ միւս կողմէ քաղաքական առաւելութիւններ կան ձեռք բերուելիք: Այսպիսի բարեկամութիւն մը պիտի է, իսկ որ քրիստոնէից արիւնով շաղախուած և հաստատուած է. որովհետեւ գերմանիականագիտութեան ոյժ տալն էր որ թոյլ տուաւ թուրքին յարգել իր հայ հպատակները: Եւ զարձակ, պատերազմի պաշտին վրայ, Գերմանիոյ իրած այս նիսգնութիւնովն էր որ այն երկրացան ու ճմլուեցան...:

Պայքում

Ն Ա Մ Ա Ա Տ Ո Ւ Փ

- Ա. Գ. Բորիզ. — Կր ցուխք որ ձեր նամակը չպիտի կրնաք հրատարակել, որովհետեւ մտոցած էք գայն ստորագրել. միայն սկզբնապատեր չեն բաւեր: Կիլի Պ. Մ. Կիլի միջոցաւ գրելիք
- Ստաղիզի քարակոփ (Թաճկ) Յովհաննէս Սափալեանը փնտոողներուն կը ծանուցանենք թէ այդ անձը ևր գանուի թուրք, Գապատաղ եօլու, Թահմիզի Գրիգորի քով:
- Մ. Գ. Գէլ, տէնճէ. — Ձեր փրձարուած անձը, երգնկացի Սեղրաք Տ. Գրիգորեան, կը գտնուի Ռուսչուքի մէջ: Հասցէն՝ Ռուս Մէլաան, Հայկ Մարտիանի սրճարանը:
- Կ. Փ. Լաւանքա. — Կր ջանանք տեղեկանալ, եւ կը հաղորդենք:
- Ամուրի. Փ. Պոլիս. — Նիւթը շահեկան է. բայց աւելի լայն կերպով պէտք է ուսումնասիրել զայն:

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Կարինէն կը գրեն թէ Կովկաս գաղթած հայերը հետզհետէ իրենց քաղաքը կը վերադառնան և կաշխատին իրենց քանդուած տունն ու անըր ոգեւորել որքան որ կը ներեն թրքական անդադրում հալածանքները:

— Տ. Արսէն Վ. Վեհուհի Վիլհելմ նաէն Սօփիա և անկէց ալ Ֆիլիպէ անցեր է, ուր կը գտնուի այս պահուս: Հաւանական է որ մօտերս Վաւնա ժամանէ, Ֆիլիպէցիներուն հրաւերովը:

— Անցեալ ուրբաթ օր, Սրմանեան պատրիարքին ընտրութեան երրորդ տարեդարձը ըլլալով, շնորհաւորական այցելութիւններ ընդունուեցին պատրիարքարանի մէջ:

— Նա՛ որդ Գ. Գիշեր, Պալլքթէսէրի մէջ մեծ հրդեհ մը ծագելով, երկու հարիւրի չափ տուներ այրեր են, որոնց մէջ կը գտնուին նաև մի քանի կեղծեցող կալուածներէն:

— Ինչի՞նչ սպորիէ կը գրեն թէ համալսարանը հայ զօրապարտօրիս Մեւլիթի որդին՝ կոմս Լուի Մեւլիթի, գրամական մեծ կորուստներու հետեւանքով անձնասպան եղեր է:

— Անցեալ Գ. օր, Սօփիայի սուրկանութիւնը Ֆերաիսնաւ իշխանին գէմ գրուած կծու պարտաւարի մը ծրինակները գտաւ, որոնք լիարուստ ցրուած էին ամէն հասարակաց վայրեր և մինչև իսկ Սօպրանիէի դիւանատան մէջ: Այս պարտաւարիքը շատ անհաճոյ տպաւորութիւն մը առաջ բերած է հասարակութեան մէջ: Կըսուի թէ ոտականութիւնը այս գրութեան հեղինակներուն հետքերը գտած է:

— Աւսումնասէն հասած լուրերը շնորանորան գլուխները կը զոռոժեն: Հայաստանէն հասած ԾՇատախցի հայեր բնակութիւն ինքրեր են Մահլաճ անուն գիւղէն, որուն բնակիչները, ոչ թէ միայն չեն հլուրեղակալեր դժբախտ հայերը, այլ և իբրեւ զաշխարհի կառավարութեան մատներ են շանոնք: Պարսիկ սարվազները, սկսեր են թնդանօթներով և հրացաններով հալածել հայ գաղթականները. և չը նայելով որ այս վերջինները կամովին անձնատուր կը լլան և իրենց անմեղութիւնը կը բացատրեն, սպայի մը հրամանով անգլթօրէն կը գըլխատուին: Թեմական առաջնորդը հեռագրով Սատրազմին բողոքելով, արդարութեան պահանջներ է: Հետեւանքը գեռ յայտնի չէ:

Երկու երեք տարի է որ Սալմաստի հայերը հանգիստ չեն տեսած: Անգութիւն մատը ակներեւ կերեւայ իրենց բոլոր դժբախտութեանց մէջ: Վերջին շաբաթները Խաչիկ վարդապետի

սկսած շէնքի շինութիւնը պարտիկ կառավարութեան հրամանով արգիլուեց է, սա առարկութեամբ թէ անհայ հրոսախումբերու համար կուտի բերդ կուղէ կառուցանել: Վարդապետը բողոքեր է ուս. հիւպատոսին, որ կը յուսացուի թէ իր ազգեցիկ միջամտութիւնովը խօսք պիտի հասկցնէ պարսիկ կառավարութեան:

Ս Պ Ի Պ Ո Ղ Ա Բ Ա Ր

կը խնդրենք մեր բոլոր այն բաժանորդներէն որոնք տակաւին Բ. վեցամեան չեն վճարած, ինչպէս նաեւ անոնցմէ՝ որոնք սկիզբէն ի վեր «Նարժու»-ը կանոնադրապէս ստանալով հանաքեթ, մինչեւ այսօր սանդիմ մը իսկ չեն զրկած խմբագրութեանս, որ այդ վճարումները «անմիջապէս» ընելու ժամանակը հասած համարեն, խորհելով թէ թերթ մը հրատարակ հանելը զայն կարգալու չափ դիւրին գործ չէ, այլ նիւթական, մտաբորական և ֆիզիքական ահագին զոհողութիւններու կը կարօտի:

Ք Ա Ղ Ա Ք Ա Ա Ն Դ Ե Պ Ք Ե Ր

Կ Ի Է Տ Է Է Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Ժպիտի և արտասուքի տեղ մըն է այս պահուս Կրէտէն: Աւրաստութեան թափերը չեն մեղմացած քրիստոնեաներու քով: Իսկ թուրքերը տրամութեան և սուգի մէջ են: Եւ սակայն ասոնցմէ շատերը՝ նամանաւանդ անոնք որ անշարժ կալուածներ ունին կզղիւին մէջ, փիլիսոփայօրէն համակերպած են նոր կացութեան և ետ կեցած զաղթելու մտադրութենէն: Միայն չբարձր գասակարգն է որ ամէն օր գունդագունդ կը դիմէ այլ և այլ թրքական երկիրներ:

Սիթիաի գաւառին մէջ քրիստոնեայ և իսլամ բռեկիւնները հաւարական ժողով մը գումարելով, բացարձակ ազատութեան սկզբունքը քուէարկելու են միահամուտ:

Կերևայ թէ Շաքիր փաշան ալ բոլոր այս տեսարանները վայելելու ուղիով, մերժելով մեկնելու հրաման նալ այն շողեակին ուրուն մէջ կը գտնուէր, առարկելով թէ՛ Գուրը այս մասին յայտնի հրաման մը չէր տուած իրեն: Այն ատեն Բօթիէ ծովակալը, Վօթուր թորփիլանաւը վրան զրկելով, ստիպեց փաշան որ իայտառակաբար հեռանայ:

Թուրք զինուորներուն և պաշտօնէից մեկնումը մէկէ աւելի ողբերգական և քիչ մըն ալ զանաւանդական տեսարաններու տեղի տուած է: Այսպէս, Բէթիմօի մէջ, ուսերը չեն ուզած թուրք տիրապետութեան նոյն իսկ փոքրագոյն հետքերը կանգուն թողուլ, և իսլամական բոլոր նշանակները, կայսերական թուրքա, մահիկ, գրօջակ, վերջապէս ամէն բան բացարձակ կերպով բերդաւորուած, կոխտուած ու շրջալուծուած են: Այն պահուն ուր ուս զինուորները բերդին պազաթէն կը խլէին օսմանեան գրօջակը, մօտերը գտնուող իսլամ կիւն մը, յուսահատութեան ճիչ մը արձակելով կաթուածահար եղեր է:

Հիւրերէ թուրք մէջ, թուրք զօրքերը հրաման ստացած էին իսկոյն բերդը պարպելու, և ֆրանսական զօրքաթին մը գացած էր զայն գրաւել: Բայց թուրք սպան պատասխաններ է թէ ինք իր կառավարութեան հրաման չէր ստացած ամրոցէն հեռանալու: Ատկէց կուր մը ծագեր է թուրքերու և ֆրանսացիներու մէջ տեղ. և ասոնցմէ մէկը քիչ մնաց զոհ երթար թուրք զինուորի մը սուլինի հարուածին, եթէ ֆրանսացի սպան, հարուածը՝ իսկոյն չմեկուսացնէր իր սուրով: Ֆրանսացիները աւելի բազմամիւր ըլլալով, անմիջապէս թուրքերու վրայ յարձակելու, պաշարեր և զինամթափ ընելով «ուսի մը մէջ ընտարակեր են: Նոյնպէս, թուրք գալմագամը չուղելով իր պաշտօնին զուրէն հեռանալ, միջազգային ոտտիկանութեան երկու պաշտօնեաներ թեւէն բռնելով գուրս նետեր են, հրելով հրմշակելով:

Այժմ, Կրէտէի մէջ, տուններու և խանութներու արժէքը տասնապատկուած է. բան մը որ բոլոր բնակիչներուն անխտիր՝ մեծ ուրախութիւն կը պատճառէ:

Հրաշալի է տեսնել հիմա այդ երկիրը, որ ամէն քայլափոխից աղատութեան յաղթական գրօջակը տեսնուի պարզուած եկեղեցիներու և հանրային պաշտօնատաններու վրայ:

Եօրկիոս իշխանին համար թէ և ըստեցաւ թէ թրիէսթէն ուղղակի Կրէտէ գացած է, և սակայն ուրիշ հեռագիր մը անոր տակաւին Աթէնք գտնուելը ծանուցած է:

Աթենացիները և կրէտացի փախստականները շքեղ ընդունելութիւն մը ըրեր են իշխանին, զայն դիմաւորելով ցնծագին աղաղակներով, և յունական ու կրէտական գրօջակներով:

Ֆ Ր Ո Ն Ս Ա

Աշխարհիս այս ամենէն գիւրագրգիւ երկիրը, Յաշտտաի խնդրին մէջ շարաշար պարտուած ու միւս կողմէ յուսախաբ՝ Ռուսիոյ օժանդակութեան վրայ դրած ահնկալութիւններուն մէջ, կը պատրաստուի նորանոր զոհողութիւններով ճշմարտապէս վստահելի բանակ մը և նաւատորմ մը ստեղծել:

Առ այս մտադրած են մէկ միլիառ ֆրանք յատկացնել նոր զրահաւորներու շինութեան:

Նոյն իսկ Անգլիան մէկ անգամէն այսքան ծախս ըրած չէր իր օժերուն յաւելման համար:

Իւսպէն Կոհիէ դատի ենթարկուած է իր «Բանակը ընդդէմ ազգին» գրքին համար, որուն մէջ բանակը թշնամանուած է: Այս առթիւ Պ. Պոլիցի Թայմզի Բարիզի թղթակիցը, խառն կը քննադատէ ֆրանսական մամուլին այն մասը որ անխղճօրէն կը հարուածէ ամէն պաշտօնէութիւն, երեւելի դիրքի տէր անձ, ֆրանսայի իմացական բոլոր փառքերը, գրագէտ, փաստաբան, դատաւոր, և կը յարէ թէ ժամանակը եկած է որ Արդարութիւնը ձայն բարձրացնէ այս վիճակին դէմ:

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Նոյ. 5ին Կ. Պոզոյ պուլկարական գործակատարը ծանուցագիր մը յանձնեց Մեծ Եպարքոսին, որով կը բողոքէ այն յարձակման դէմ զոր, թուրք կանոնաւոր զինուորները ըրած են պուլկարական հողի վրայ, Բուպտուշի գաւառին մէջ, և պուլկար դիւզացիներէն յախշտակած են հարիւրաւոր ոչխարներ:

Ծանուցագիրը կը յարէ թէ պուլկար կառավարութիւնը զինուորական խիստ միջոցներ ձեռք կառնէ, այս յարձակումները արգիլելու և սահմանադիւրս անբռնաբարելիութիւնը պաշտպանելու համար:

Թուրք կառավարութիւնը բոլորովին կը հերքէ սերպերու ըրած գանգատները, Գոսովայի կացութեան մասին:

Թանի քաղաքական բաժնին առաջին խմբագիր և Տրէյֆիւսի կուսակից Պ. Բոէսանսիէի անուշնը շնջուեցաւ Պատոյ լէգէոնի ցանկէն: Այս շնջումը նոյն իսկ Պ. Բոէսանսիէ պահանջած էր Չուրի պատուանշանին ետ առնուելուն վրայ:

Երեսուցէ մի մէջ թուրքերը շարաշար կերպով ձեծեր են իտալացի թղթակից մը, որ իր թերթին մէջ քննադատած էր թուրք կառավարութիւնը՝ վերհէլ մի այցելութեան առթիւ ըրած շտալ և պարապ ծախքերուն համար:

Եթէ մէկէն հասած լուրերը կը ծանուցանեն թէ այնտեղի արապները ապստամբեր են Կ. Պոլսէ զրկուած պաշտօնեայներու, դէմ և թէ զինուորները մեծ դժուարութիւններ կը քաշեն զանոնք զսպելու համար:

Ա Ջ Դ

Պատ. Հայկ Եարոմեան բարոյական փիլիսոփայութեան դասեր պիտի խօսի, Պուլկար Բողոքականաց ժողովարանը այս ուրբաթ օրէն սկսելով ամէն ուրբաթ երեկոյեան ժամը եօթուկէսին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՃՈՒՄ»-ի
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակազուլ, հարսանեկան հրատարակիչ, մահազոյ, լնչպէս նաև պրօշիւտներ:

Գիններն յոյժ վերամուտելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգուծեամբ և փութով կը կատարուին:

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 11 նոյնմըր

ՊՈՒՂՏԱՅ
Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ 9—9.50 ֆրանք
Արապ, լիպրա 55—60 հէքթօլ 9—12 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 42—50 հէքթօլ 5.80—6.20 ֆրանք

ՄԻՍԻՐ
Վակօն, 55—57 լիպրա, 6.80—7
Առապ, 55—60 լիպրա, 6—6.20
Կիւնկէ 8—10 վակօն, 25—30 առապ
Կէլմէքաէ տիր:

ԵՆԻՒԱՅ
Կիւնտէ 20—25 առապ կէլմէքաէ տիր 5.40—5.70 ֆրանք

ՏԱՐԸ
Կիւնտէ 5—6 առապ կէլմէքաէ տիր 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵԱ
Կիւնտէ 8—10 առապ կէլմէքաէ տիր 100 օզգասը 18—22 ֆր. մալա կէօրէ
Առապ մուամէլէսի Նաբօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր:

Կիւնտէ 25—30 վակօն, 150—200 առապ պուլկար, 20—25 առապ արապ կէլմէքաէ տիր:

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԿԵՍԵՔԻՑ)

(Գին 1 Ֆրանք)

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին վառնաի մէջ Եարժուի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով:

Մօտերս մամուլին կը յանձնուին նոյն հեղինակին «Բռնութեան գոհերը»:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալա, թահմիկ Կէօղիպէօյլեքեանի խանութը, և Ապալարաճեանի մզկիթին դէմը հայկական գրատունը: Ա. Զարպանէի տանի քով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱԶ-ԳԻՒԼԵԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԵՐԼԻՆԻ ԳՆՇԱՆԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՏՈՅ

ԳԻՆ 1 ՖՐԱՆԿ

Կը վաճառուի Եարժուի խմբագրատունը: